ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար թղթի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 24.10.2018թ. N 274/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.11.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Սարգսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Տ.Պետրոսյանը, Մ.Կարապետյանը, և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Աճուրդի ամփոփման արդյունքների մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Սարգսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Սմարթլայն» ՍՊԸ-ն (ք. Երևան, Վարդանանց փող., 110 շենք)

2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

«Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Նախահաշվային գինը ՀՀ դրամ
		«Սմարթլայն» ՍՊԸ	
1	Թուղթ, A4 ֆորմատի	8 970 000	**9 880 800**

4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ամփոփման արդյունքները, արձանագրեց, որ «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը /10 764 000 ՀՀ դրամ/ գերազանցում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը /9 880 800 ՀՀ դրամ: Գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Սարգսյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Սարգսյան

Անդամներ՝ Տ.Պետրոսյան

Մ.Կարապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան